 յիշատակել/հիշա-. յուշատօնել/հու-տօնել*
 Gedenken *n* -s յիշատակ/հիշատակ. յիշողու-
 թիւն/հիշողութիւն
 Gedenkfeier *f* յուշատօն/հուշատօն, յուշա-
 հանդէս/հուշահանդէս
 Gedenkgottesdienst *m* յիշատակի/հիշա-
 արարողութիւն/-ութիւն
 Gedenkmarke *f* յիշատակի դրոշմաթուղթ
 Gedenkminute *f* յոտնկայս/հոտնկայս
 լուսնութիւն/լուսնութիւն
 Gedenkmünze *f* յուշադրամ/հուշա-, յուշա-
 մետալ/հուշամետալ
 Gedenkrede *f* յուշաճառ/հուշաճառ
 Gedenkstätte *f* յուշակոթող/հուշակոթող.
 յուշարձան/հուշ-

Gedenkstein *m* յուշաքար/հուշաքար. յուշա-
 կոթող/հուշա-
 Gedenktafel *f* յուշատախտակ/հուշատախտակ
 Gedenktag *m* յիշատակի/հիշատակի օր
 Gedicht *n* -(e)s,-e ոտանաւոր/պոեմ, քերթ-
 ուած, բանաստեղծութիւն/պոեզիա
 Gedichtform *f* չափածոյ/չափածո
 Gedichtinterpretation *f* քերթուածի վերլու-
 ծում
 Gedichtsammlung *f* բանաստեղծութիւններու/
 -յունների հաւաքածոյ/հավաքածու
 gediegen *տոկուն. դիմացկուն. որակաւոր/-
 վոր. բծախնդիր. տեւական. զուտ* [մետաղ...]. խս
 տարօրինակ. զուարճալի
 Gediegenheit *f* տոկունութիւն/-թյուն. բարձր
 որակ. զտութիւն/-թյուն (մետաղ...)
 gedieh => gedeihen
 gedimmt *տկարացած* (լոյսի մասին). մթադնած
 Gedinge *n* -s,-n հատուկ
 Gedöns *n* -es խս իրարանցում. աղմուկ
 Gedränge *n* -s բազմութիւն/-թյուն. իրարան-
 ցում. հրմշտուք. խոնում. խճողում
 Gedrängel *n* -s խս խճողում
 gedrängt *խճողուած/-ված, խոնուած/-ված*
 Gedrängtheit *f* խճողուածութիւն/-վածութիւն,
 խոնուածութիւն/-վածութիւն
 gedrechselt *փքուն, ուռուցիկ* (ոճի մասին)
 Gedröhn *n* -es,-e թնդիւն/թնդյուն. որոտ
 gedruckt *տպագրուած/-գրված, տպագիր*
 gedrückt *ճնշուած/-շված. ընկճուած/-ճված,
 մռայլ. վրդով*
 Gedrücktheit *f* մռայլութիւն/-ութիւն.
 ընկճուածութիւն/-վածութիւն
 gedrungen => dringen, կարճ ու գիրուկ
 Gedrungenheit *f* կարճ ու գիրուկ կազմ
 Gedudel *n* -s խս վատանուկ/վատանվագ.
 անախորժ աղմուկ
 Geduld *f* - համբերութիւն, համբերանք
 gedulden *չք համբերել, դիմանալ, տոկալ*
 geduldig *համբերատար, համբերող*
 Geduldsarbeit *f* համբերութիւն պահանջող
 աշխատանք
 Geduldsfaden: jetzt reißt mir aber der ~ *ա՛լ
 համբերութիւնս կը հատնի/հատնում է*
 Geduldssprobe *f* համբերապահանջք
 Geduldsspiel *n* համբերախաղ. կազմանկար
 geduldsam *համբերատար, համբերող*
 gedungen => dingen
 gedunsen *ուռած. սպունգային*
 Gedunsenheit *f* ուռածութիւն/-թյուն
 Gedünstete *n* -, -n շոգեհարուած/-րված ճաշ
 geehrt *յարգելի/հարգելի, յարգուած/հարգված*

geeignet յարմար/հարմար. պատշաճ. պատեհ
 geeist սառահարուած/-ված
 Geek m -s,-s խաղաղ գործի մոլի, աշխատամոլ
 Geest f -,-en անբերրի ափատարածութիւն/յուն
 gef. Gefallen
 gefächert պէսպիսուն/պես-. ալյազան
 Gefahr f -,-en վտանգ/ուրիշ. հարիք. փորձանք
 gefahrbringend վտանգաւոր/-ավոր. փորձա-
 նաւոր/-վոր, փորձանալի
 gefährden նր վտանգել, վտանգի ենթարկել
 gefährdet վտանգուած/-ված, փորձանքի
 ենթարկուած/-ված
 Gefährder m -s,- վտանգող, սպառնացող
 gefahrdrohend վտանգաւոր/-վոր. փորձանա-
 ւոր/-վոր
 Gefährdung f -,-en վտանգում, փորձանում
 Gefahr n վատ ավտովարում
 Gefahrenabwehr f վտանգի վերացում
 Gefahrenbereich m վտանգաւոր/-ավոր գօտի
 /գոտի
 Gefahrenherd m վտանգաւոր/-վոր շրջան
 Gefahrenlage f վտանգաւոր կացութիւն
 Gefahrenmoment m վտանգի պահ
 Gefahrenpotenzial n վտանգի հաւանականու-
 թիւն/պոտենցիալ
 Gefahrenquelle f վտանգի պատճառ
 Gefahrensignal n վտանգի նշան
 Gefahrensituation f վտանգաւոր կացութիւն
 Gefahrenstelle f վտանգաւոր/-վոր վայր
 Gefahrensymbol n վտանգի նշան
 gefahrenumwittert վտանգաւոր. վտանգալից
 Gefahrenzone f վտանգաւոր/-ավոր գօտի/գո-
 տի
 Gefahrenzulage f վտանգալին յաւելաւոր/հավ-
 ցում
 Gefahrgut n վտանգաւոր/-վոր ապրանք
 gefährlich վտանգաւոր/-ավոր, վտանգալից
 Gefährlichkeit f վտանգաւորութիւն/-ութիւն
 gefahrlos անվտանգ. անփորձանք
 Gefahrlosigkeit f անվտանգութիւն/-ութիւն
 Gefahrstelle f վտանգաւոր/-վոր վայր
 Gefährt n -(e)s,-e կառք, փոխադրամիջոց
 Gefährte m -n,-n ընկեր. ուղեկից
 Gefährtin f -,-nen ընկերուհի. կենակցուհի
 gefahrvoll վտանգաւոր/-ավոր, վտանգալից
 Gefahrzeichen n վտանգի նշան
 Gefälle n -s,- գառիվար/-վայր. թեքութիւն
 gefallen ջր հաճելի թուր/դուր դալ. հաւնիլ/
 հավանել. ախորժիլ/ախորժել
 es gefällt mir կը հաւնիմ/հավանում եմ
 sich ~ lassen համբերութեամբ տանիլ/տանել
 gefallen ինկած/ընկած, գոհուած, սպանուած
 Gefallen n -s հաճոյք/հաճույք. գոհունակու-
 թիւն. գուարճութիւն/-ութիւն

Gefallen m -s,- ծառայութիւն. շնորհ. լաւու-
 թիւն. սպասարկութիւն/-ութիւն
 Gefallene m/f -n,-n գոհ, մեռեալ/մեռյալ
 Gefallenendenkmal n պատերազմի զոհերու/ի
 յուշարձան/հուշարձան
 Gefällestrecke f գառիվար
 gefällig հաճոյակատար. պատրաստակամ.
 հաճելի
 Gefälligkeit f -,-en ծառայութիւն. պատրաս-
 տակամութիւն. սիրալիրութիւն/-ութիւն
 ~sakzept n խնայողականութիւն
 ~swechsel m խնայողականութիւն
 gefälligst ինդերե՛մ, հաճիք/հաճեցե՛ք
 Gefällstrecke f գառիվար
 Gefallsucht f սննդաբնութիւն/կոկետութիւն
 gefallsüchtig քծնող. հաճոյամոլ/կոկետ
 gefälscht կեղծուած/-ված
 Gefangene m/f -n,-n գերի. բանտարկեալ
 gefangen geben (sich) նր յանձնուել/հանձնուել,
 գերիութիւն/-ութիւն ընդունիլ/-ել
 Gefangenaufseher m բանտապահ
 Gefangenaustausch m գերիներու/-ներ
 փոխանակութիւն/-ութիւն
 Gefangenenbefreiung f գերիներու/-ներ
 ազատագրում
 Gefangenenfieber n բժ ոջիւնէրէ/-րից
 փոխանցուած փոխանցիկ հիւանդութիւն
 Gefangenenhilfsorganisation f բանտարկեալ-
 ներու/-կալներ Օգնական կազմակերպ-
 ութիւն/-ութիւն
 Gefangenenlager n բանտ. արգելանոց
 Gefangenentypus m Gefangenenfieber
 Gefangenenwärter m բանտապահ
 gefangen halten նր գերի պահել
 gefangen nehmen նր գերի առնել/վերցնել
 Gefangenschaft f գերութիւն, բանտարկութիւն
 gefangen setzen նր գերի առնել/վերցնել
 Gefängnis n -ses,-se բանտ, արգելանոց/մեկու-
 սարան, բռնատուն, կալանատուն
 ~aufenthalt m բանտարկութիւն/-ութիւն
 ~aufseher m բանտապահ, բանտապան
 ~besuch m բանտարկեալի այցելութիւն
 ~direktor m բանտի տնօրէն/բանտապետ
 ~disziplin f բանտային կարգապահութիւն
 ~haft f բանտարկութիւն/ազատագրում
 ~hof m բանտի բակ
 ~insasse m բանտարկեալ/բանտարկյալ
 ~insassin f էգ բանտարկեալ/-կալ
 ~kluft f բանտարկեալի զգեստ
 ~kumpel m բանտակից, կալանակից
 ~mauer f բանտի պատ
 ~ordnung f բանտի օրինակարգ

~personal *n* բանտի անձնակազմ
 ~psychose *f* բանտային հոգեճնշում
 ~revolte *f* բանտային ըմբոստույթի են
 ~strafe *f* ազատագրվում, բանտարկույթի են / -
 ություն, կայանաւորում / -վորում
 ~tor *n* բանտի դարպաս
 ~urteil *n* իր բանտարկույթեան վճիռ
 ~wagen *m* բանտարկեալներու / -րի կառք
 ~wärter *m* բանտապահ, բանտապան
 ~zelle *f* բանտախոց, խոց, բանտ
 gefärbt *ներկուած / ներկված, գունաւոր / -վոր*
 Gefasel *n-s* դատարկախօսութիւն / -ություն,
 ակեղցփեղ խօսք / խոսք, բարբաջանք. շողա-
 կրատութիւն / -ություն
 Gefäß *n-es,-e* անոթ [fissl ԿԿ]. աման. թաղար.
 ծաղկաման. խողովակ. երակ. շնչերակ
 Gefäßchirurgie *f* քժ երակային վիրաբուժու-
 թիւն / -ություն
 gefäßweiternd *երակ լայնցնող / լայնացնող*
 Gefäßleiden *n* քժ երակատապ, երակներու / -րի
 հիւանդութիւն / հիվանդություն
 Gefäßmal *n* խալ, ի ծնչ նշան
 gefasst *հանգիստ. գուսպ. պատրաստ*
 Gefasstheit *f-* զսպութիւն, հանդարտութիւն /
 -ություն. պաղարիւնութիւն / -րյունություն
 Gefäßuntersuchung *f* քժ երակային, սրտանօ-
 թային / -նոթային քննութիւն / -ություն
 Gefäßverengung *f* երակի կծկում
 Gefäßverkalkung *f* երակաչորացում
 Gefäßverschluss *m* քժ երակախցում
 Gefäßverstopfung *f* երակախցում
 Gefäßwand *m* իլլ երակի ներերես
 Gefecht *n-(e)s,-e* կռիւ / կռիվ. ճակատամարտ.
 սրամարտ
 ~sabschnitt *m* պատերազմի գօտի / գոտի
 g~artig *մարտանման, պատերազմանման*
 ~saufklärung *f* մարտական հետազօտում
 ~sausbildung *f* զինավարժութիւն / -ություն
 ~sbefehl *m* մարտահրահանգ
 ~sbeladung *f* ռազմամթերք
 g~sbereit *մարտի պատրաստ*
 ~sbereitschaft *f* մարտի պատրաստ վիճակ
 g~sfähig *մարտունակ. պատերազմելու ատակ*
 ~sfeld *n* պատերազմի դաշտ, մարտավայր
 ~shut *m* մետաղեայ / -յա սաղաւարտ
 ~sintensität *f* մարտի սաստկութիւն / -ություն
 g~sklar *մարտի պատրաստ*
 ~skopf *m* թիրախամէտ / -մետ ռումբ
 ~sladung *f* հրթիռի ռազմամթերք
 ~slärm *m* մարտաղմուկ
 ~slinie *f* ռմ ռազմաճակատ
 g~smäßig *ռազմունակ / օրէն*

~spause *f* զինադադար, զինադուլ
 ~ssieger *m* մարտի յաղթական / հաղթական
 ~sstand *m* մարտական դրութիւն / -ություն
 ~sstärke *f* մարտական զօրութիւն / զոր-յուն
 ~sübung *f* մարտափորձ, զինափորձ
 ~sverlierer *m* մարտի պարտուող / -վող
 gefedert *զսպանակաւոր / -վոր. առածգական*
 Gefege *n-s,-* թափած կոտորածագ
 gefeiert *համբաւաւոր / -վաւոր, հռչակաւոր / -*
ավոր. տօնակատարուած / տոն-ված
 Gefeiische *n-s* փնտռութ. խուզարկում
 gefeit *վարակամերթ. ապահով. պաշտպանուած*
 Gefeitsein *n* վարակամերթութիւն. դիմադրու-
 նակութիւն / -թյուն
 gefestigt *ամրացած. հաստատ. ամուր*
 Gefiedel *n-s* իւ մատնահարում. ձանձրանալի
 ջութակահարութիւն / -թյուն
 Gefieder *n-s,-* փետրածածկոյթ / -կոյթ
 gefiedert *փետրածածկ*
 Gefilde *n-s,-* հողատարածութիւն / -ություն
 gefinkelt *իւ խորամանկ, սկրթած*
 gefitzt *իւ խորամանկ, սկրթած*
 Geflacker *n-s* պլպլացում, շողշողում
 geflammt *ալիքաւոր / -վոր. ատամնաւոր / -վոր*
 Geflatter *n-s,-* թափահարում. ծածանում
 Geflecht *n-es,-e* հիւսուածք / հյուսվածք
 gefleckt *բծաւոր / -վոր. կիտաւոր / -վոր [կերպաս]*
 Geflenn *n-(e)s* իւ լաց ու կոծ
 Geflimmer *n-s,-* շողշողում, առկայծում
 geflissen *փութաջան, եռանդոտ, ջանասէր / -*
սեր, աշխատասէր / -սեր
 Geflissenheit *f-* փութաջանութիւն / -թյուն,
 եռանդ, ջանասիրութիւն / -թյուն
 geflissentlich *փութաջանօրէն / -օրէն. դիտա-*
ւորեալ / -վորյալ
 geflochten \Rightarrow flechten
 geflogen \Rightarrow fliegen
 geflohen \Rightarrow fliehen
 Geflohene *m/f* -, -n փախստական, տարագրեալ,
 գաղթական
 geflossen \Rightarrow fließen
 Geflügel *n-s* թռչնագրիներ. թռչնեղէն / -ղեն.
 հաւեղէն / հավեղեն
 ~farm *f* հաւաբուծարան / հավաբու- թռչնա-
 բուծարան. հաւնոց / հավնոց
 ~fleisch *n* հաւեղէնի / հավեղենի միս
 ~hof *m* հաւնոց / հավ-. հաւաբուծարան
 ~klein *n-s* հաւեղէնի / -վեղենի փոքրութիւն
 ~kraftbrühe *f* հաւապուր / հավապուր
 ~salat *m* հաւեղէնով աղցան
 ~schere *f* հաւեղէնի / -վեղենի մկրատ
 ~suppe *f* հաւապուր / հավապուր

~zucht *f* հաւաքուծութիւն/հավաթյուն
geflügelt *թեւաւոր*. փխ երեւակայածին
 ~e Worte բանաստեղծական խօսքեր.
 հանրածանօթ/նոթ խօսքեր/խոսք-
Geflügelzucht *f* հաւաքուծութիւն/հավաքու-
 ծություն. թռչնաբուծութիւն/-ություն
Geflunker *n -s* լու ստախոսութիւն. մեծխօսի-
 կութիւն/-խոսիկություն
Geflüster *n -s* փսփսուք. շշնջիւն/շշնջյուն
gefochten ⇒ **fechten**
Gefolge *n -s,-* շքախումբ. հետևորդ
Gefolgschaft *f -* շքախումբ. կողմնակից
 խումբ. հպատակում
Gefolgsleute յգ կողմնակիցներ
Gefolgsman *m* հետևորդ. կողմնակից
Gefrage *n -s* լու հարցադրում. հարցումներ
gefragt պահանջուած/-ված. ժողովրդական
gefräßig շատակեր, որկրամոլ
Gefräßigkeit *f* շատակերութիւն, որկրամոլու-
 թիւն/-ություն
Gefreite *m -s,-n* ռմ փոխ տասնապետ
gefressen լու գանած, զգուած/զգված. լափուած
 /-ված
Gefrett *n -s* լու հոգ/հոգս, մտահոգութիւն/յուն
Gefrieranlage *f* սառցարան, սառցապահարան
Gefrierbehandlung *f* թմ սառցաբուժութիւն
Gefrierbeutel *m* սառեցումի տոպրակ
Gefrierchirurgie *f* թմ սառցափրբաբուժութիւն
gefrieren չր սառիլ/սառչել, սառ դառնալ
Gefrierfach *n* սառնադարան
Gefrierfleisch *n* սառած միս
Gefriergemüse *n* սառած բանջարեղէն/կանա-
 չեղէն
gefriergetrocknet սառեցմամբ չորցած/չորա-
 ցած
Gefrierkost *f* սառած պարէն/պարեն
Gefrierobst *n* սառած պտուղ/միրգ
Gefrierpunkt *m* սառեցման կէտ/կետ
Gefrierraum *m* սառցասենեակ/-յակ
Gefrierschrank *m* սառցապահարան, սառցա-
 րան
Gefrierschutzmittel *n* սառուցապաշտպան
 լուծոյթ/լուծույթ
Gefriertemperatur *f* սառեցման ջերմաստիճան
Gefriertrocknung *f* սառեցմամբ չորացում
Gefriertruhe *f* սառնանտուկ, սառցարան
Gefrierverfahren *n* սառեցման գործընթաց
Gefrieß *n -es,-er* լու դէմք, դիմադիծ
gefroren ⇒ **frieren**
Gefrorene(s) *n* պաղպաղակ
Gefuchtel *n -s* շարժուձև. ձեռնածութիւն/յուն

Gefüge *n -s,-* կառուցուածք/-ուցվածք. կազմ-
 ուածք/կազմվածք
gefüge գիջող. հլու
gefügig գիջող, ճկուն, հլու. համողող
Gefügigkeit *f -* հնազանդութիւն/-ություն.
 գիջողութիւն. հլուութիւն/-թյուն
Gefühl *n -s,-e* զգացում. զգացմունք. ապրում.
 յոյզ/հույզ
gefühlertfüllt զգացալի. գեղուն
gefühlig աժան զգացական, գերզգացական
Gefühligkeit *f* աժան զգացականութիւն/-թյուն
gefühllos անզգայ/անզգա. անգութ, անկարե-
 կիր, անվշտակիր
Gefühllosigkeit *f* անզգայութիւն/-ություն,
 զգայազրկութիւն, անզգացողութիւն/-թյուն
gefühlaktiv զգացական. գերզգացական
Gefühlsanwandlung *f* զգացական պոռթկում
gefühlarm անզգայուն, անզգայ/-գա,
 անտարբեր, զգայազուրկ
Gefühlsarmut *f* անզգայնութիւն/-ություն,
 անտարբերութիւն, զգայազրկութիւն/-թյուն
Gefühlsaufwallung *f* զգացական պոռթկում
Gefühlsausbruch *m* զգացումներու/-րի
 գեղում
Gefühlsausdruck *m* զգացական արտայայտու-
 թիւն/-հայտութիւն
Gefühlsäußerung *f* զգացական արտայայտու-
 թիւն/-հայտութիւն
gefühlbedingt զգացական/սենտիմենտալ
gefühlbestimmt զգացական/սենտիմենտալ
gefühlbetont զգացական/սենտիմենտալ
Gefühlsdenker *m* զգացական մտածող
Gefühlsdinge յգ զգացական հարցեր
Gefühlsduselei *f* լու գերզգացականութիւն/-
 ություն
gefühlsduselig գերզգացական
gefühlsecht հարազատ զգացումներով
Gefühlseindruck *m* տպաւորութիւն/-վո-
 թյուն
Gefühlserguss *m* զգացական պոռթկում
gefühlserregend զգացումներ անթնցնող
gefühlshaft զգացական. զգայուն
gefühlskalt անզգացական. անզգայուն.
 անտարբեր
Gefühlskälte *f* անզգայնութիւն. անզգացակա-
 նութիւն/-ություն
Gefühlslage *f* զգացական վիճակ
Gefühlsleben *n* զգացական կեանք/կյանք
Gefühlsleere *f* անզգացականութիւն/-թյուն
gefühlsmäßig զգացական/օրէն. բնազգային
Gefühlsmensch *m* զգայուն/զգացական անձ
Gefühlsnerv *m* կլ զգացական ջիղ

Gefühlsregung *f* զգացական գրգիռ
 gefühlsroh քարասիրտ, անզգայուն, անզգացա-
 կան
 Gefühlsroheit *f* քարսրտութիւն. անզգայու-
 թիւն/-թյուն
 Gefühlssache *f* զգացումի հարց
 Gefühlsschwelgerei *f* - գերզգացականութիւն
 gefühlsselig զգացական/սենտիմենտալ
 Gefühlsseligkeit *f* - զգացականութիւն/-թյուն
 gefühlsstark գերզգացական
 Gefühlsstau *m* զգացումներու/-րի խճողում
 gefühlstief գերզգացական
 Gefühlstiefe *f* գերզգացականութիւն/-ություն
 Gefühlsüberschwang *m* գերխանդավառու-
 թիւն/-թյուն
 gefühl(s)voll զգացական/սանտիմենտալ
 Gefühlswallung *f* զգացական պոռթկում
 Gefühlswärme *f* զգացական ջերմութիւն
 Gefühlswelt *f* զգացական աշխարհ
 geführt *առաջնորդիչ, գլխաւորիչ/-վորիչ*
 gefüllt լեցուած/լցված, լեցուն. լիցքաւորուած
 /լիցքավորված
 Gefummel *n* -s խա համբակ աշխատանք
 gefunden ⇒ finden
 Gefunkel *n* -s շողշողացում. շողշողում
 gefurcht ակօտուած/ակոսված. կնճռոտուած/
 կնճռոտված
 gefürchtet վախեցուած/վախեցված. վատօրէն
 ակնկալուած/-ված
 gegabelt երկճիւղ/երկճյուղ
 Gegacker *n* -s կատոց, կռկռոց (խաղարմ, խաղարի
 խանձ ձայն)
 gegangen ⇒ gehen, գացած/գնացած
 gegeben ⇒ geben, տրուած/տրված
 gegebenenfalls տուեալ պարագային/տվյալ
 դեպքում. անհրաժեշտ պարագային
 Gegebenheit *f* -en առկայ/տվյալ պայման
 Gegeifer *n* -s,- լորձունքոտում
 gegen դէմ, ընդդէմ/-դեմ. հակառակ. հանդէպ
 /-դեպ, նկատմամբ. համեմատած, բաղդատած.
 փոխարէն/-րեն. մօտ/մոտ, շուրջ. դէպի/դե-
 պի. դիմաց
 Gegenaktion *f* հակազդեցութիւն/-ություն,
 հակազդում/ռեակցիա
 Gegenangebot *n* փոխառաջարկ
 Gegenangriff *m* հակադարձակում/հակադրոհ
 Gegenansicht *f* հակառակ կարծիք
 Gegenantrag *m* հակառաջարկ/հակառաջարկ
 Gegenanzeige *f* թժ հականշան
 Gegenargument *n* հակափաստարկ
 Gegenaussage *f* իր հակառակ հաստատում
 Gegenbedingung *f* փոխպայման

Gegenbefehl *m* նմ հակահրաման
 Gegenbehauptung *f* հակառակ հաստատում
 Gegenbeispiel *n* հակաօրինակ
 Gegenbeschuldigung *f* փոխադարձ ամբաս-
 տանութիւն/-թյուն
 Gegenbesuch *m* փոխայցելութիւն/-ություն
 Gegenbewegung *f* հակաշարժում
 Gegenbeweis *m* հակափաստ, հակապացոյց/-
 ապացոյց
 Gegenbild *n* հակապատկեր
 Gegenbitte *f* փոխինդրանք
 gegen|buchen նր առ կրկնակի տոմարագրել
 Gegenbuchung *f* առ կրկնակի տոմարագրում
 gegen|checken նր կրկնակի ստուգել
 Gegend *f* -en վայր, շրջան. շրջակայք. տեղ
 Gegendarstellung *f* հակամեկնաբանութիւն/-
 ություն
 Gegendemo կճ Gegendemonstration
 Gegendemonstration *f* հակացոյց/հակացոյց
 Gegendienst *m* փոխադարձ ծառայութիւն/-
 ություն
 Gegendruck *m* թք հակաճնշում. ընդդիմութիւն
 /-ություն
 gegeneinander իրարու դէմ/մեկգմեկի դեմ.
 փոխադարձաբար. մէկը միւսին/մեկը
 մյուսին
 Gegeneinander *n* -s ընդդիմութիւն/-ություն
 gegeneinander|antreten չր իրարու/մեկմեկի
 դէմ/դեմ ելլել/ելնել
 gegeneinander|drücken նր իրարու դէմ/իրար
 դեմ ճնշել
 gegeneinander|halten նր բաղդատել, համեմա-
 տել, գուգադրել
 gegeneinander|hetzen նր զիրար/միմյանց
 գրգռել
 gegeneinander|prallen չր իրարու ընդհարել/
 մեկմեկի ընդհարվել
 gegeneinander|setzen նր իրարու դէմ/իրար
 դեմ կանգնեցնել
 gegeneinander|stehen չր իրարու դէմ/դեմ
 գտնուել/գտնվել
 gegeneinander|stellen նր բաղդատել. համեմա-
 տել. գուգադրել
 gegeneinander|stoßen չր իրարու ընդհարել/
 մեկմեկի ընդհարվել
 Gegeneinladung *f* փոխհրաւեր/փոխհրավեր
 Gegenentwurf *m* ծրագրի տարբերակ
 Gegenerklärung *f* հերքում. ճշգրտում
 Gegenfahrbahn *f* հակոտնեայ/-նյա կառուղի
 Gegenfeuer *n* նմ թշնամական կրակ
 gegenfinanzieren նր փոխֆինանսաւորել/-
 վորել

Gegenfinanzierung *f* փոխֆինանսավորում/-վորում
 Gegenforderung *f* փոխպահանջք
 Gegenfrage *f* հակահարց, փոխհարց
 gegen|fragen *չբ* հակահարցել, փոխհարցել
 Gegenfüßler *m* հակառակ նկարագրով անձ
 Gegengabe *f* փոխնուէր/փոխնվեր, փոխադարձ նուէր/նվեր
 Gegengerade *f* նկարագրի հեռավոր/-վոր մաս
 Gegengeschäft *n* փոխադարձ գործարկ
 Gegengeschenk *n* փոխադարձ նուէր/նվեր
 gegengeschlechtlich հակասեռային
 Gegengesellschaft *f* գուգահեռ ընկերութիւն
 Gegengewalt *f* փոխադարձ սաստկութիւն/յուն
 Gegengewicht *n* հակաբեռ, հակակշիռ
 Gegengift *n* բժ հակաթոյն/-թույն, դեղթափ
 gegengleich համաչափ, ցոլանման
 Gegengleis *m* հակոտնեայ/-նյա երկաթուղի
 Gegengrund *m* հակապատճառ
 gegen|halten *չբ* հակադարձել, պաշտպանուել/-վել, դիմադարձել
 Gegenindikation *f* բժ հակացուցիչ
 Gegenkaiser *m* հակակայսր
 Gegenkandidat *m* ընդդիմադիր թեկնածու
 ~in *f* ընդդիմադիր կին թեկնածու
 Gegenklage *f* իր հակադատ/հակահայց
 Gegenkläger *m* իր հակադատ բացող
 ~in *f* իր հակահայց բացող կին
 Gegenkompliment *n* փոխադարձ հաճոյախօսութիւն/-խոսություն
 Gegenkönig *m* հակաարքայ/-քա, հակաթագաւոր/թագավոր
 Gegenkonzept *n* հակոտնեայ դադափար
 Gegenkraft *f* հակոտնեայ/-նյա ուժ
 Gegenkultur *f* փոխընտրային քաղաքակրթութիւն/կուլտուրա
 Gegenkurs *m* հակոտնեայ/-նյա ուղղութիւն/-ություն, դիրքաւորում/-վորում
 gegenläufig հակադարձ, հակոտնեայ/-նյա
 Gegenleistung *f* փոխադարձ ծառայութիւն
 gegen|lenken *չբ* ընդդիմանալ, հակադարձել
 gegen|lesen *նր* վերանայել/-ել, վերընթերցել, վերստուգել
 Gegenlesen *n* վերընթերցում, վերանայում
 Gegenlicht *n* դիմալոյս/դիմալույս
 ~aufnahme *f* դիմալուսային նկար
 ~blende *f* դիմալոյսի/-լույսի խափանիչ
 Gegenliebe *f* փոխադարձ սէր/սեր
 Gegenmacht *f* դիմուժ, հակառակ ուժ
 Gegenmann *m* հակառակորդ, թշնամի-դիմացի անհատ
 Gegenmaßnahme *f* հակամիջոց

Gegenmeinung *f* հակառակ տեսակէտ, հակա-տեսակէտ/-կէտ
 Gegenmittel *n* բժ հակամիջոց, հակադեղ
 Gegenmutter *f* թր արգելապատուտակ
 Gegenarrativ *n* հակաբանածեում
 Gegenoffensive *f* հակաշարձակում/-հարձակ-
 Gegenöffentlichkeit *f* հակահասարակութիւն
 Gegenpapst *m* հակապապ
 Gegenpartei *f* հակակուսակցութիւն/-թյուն
 Gegenpflicht *f* փոխադարձութիւն/-վոր-
 թյուն
 Gegenpol *m* հակաբեռ. փ/ս հակադրութիւն/-
 ություն
 Gegenprobe *f* հակափորձ
 Gegenpropaganda *f* հակաքարոզչութիւն/հա-
 կապրոպագանդա
 gegen|prüfen *նր* կրկնակի ստուգել
 Gegenreaktion *f* հակազդեցութիւն/-ություն
 Gegenrechnung *f* թ ստուգում. ար փոխադարձ պարտաւորութիւն/-վորություն
 Gegenrede *f* պատասխան ճառ. ընդդիմախօ-
 սութիւն/-ություն
 Gegenregierung *f* հակակառավարութիւն
 Gegenrevolution *f* հակայեղափոխութիւն/
 հակահեղափոխություն
 Gegenrichtung *f* հակառակ ուղղութիւն
 Gegensatz *m* հակադրութիւն, ներհակութիւն
 gegensätzlich հակադիր, ներհակ
 Gegensätzlichkeit *f* ներհակութիւն/-ություն.
 հակառակութիւն/-թյուն
 Gegensatzwort *n* հականիշ, հակիմաստ բառ
 Gegenschall *m* արձագանդ
 Gegenschlag *m* հակահարուած/-հարված
 Gegenschwiegereltern *չբ* խնամիներ
 Gegenseite *f* հակադիր կողմ. ընդդիմութիւն
 gegenseitig փոխադարձ/աբար. դիրար/իրար
 Gegenseitigkeit *f* փոխադարձութիւն/-թյուն
 Gegensinn *m* im ~ ընդդիմականօրէն
 gegensinnig հակառակ ուղղութեամբ
 Gegenspieler *m* հակառակորդ. թ/ս խաղընկեր
 Gegenspielerin *f* կին հակառակորդ. թ/ս խաղըն-
 կերուհի
 Geespionage *f* հակալրտեսութիւն/-ություն
 Gegensprechanlage *f* ներքին հեռախօս/-խոս
 Gegenstand *m* առարկայ/-կա, իր. նիւթ/
 նյութ. թեմա
 gegenständig դիմակայ/դիմակա, դիմացի
 gegenständiglich թանձրացեալ/կոնկրետ
 Gegenstandspunkt *m* հակադիր տեսակէտ/կէտ
 gegenstandsbezogen առարկայական/կոնկրետ
 gegenstandsfrei վերացական

gegenstandslos *անիմաստ, անօգուտ. անառար-
կայական/անկոնկրետ. վերացական*
Gegenstandssatz *մ թլլ գլխաւոր/-վոր նախա-
դասուլիսին/-թյուն*
gegen|steuern *չբ պայքարել/պայքարել, ընդ-
դիմանալ, հակառակել/-կվել*
Gegenstimme *ֆ հակաքուէ. ելլ լրացուցիչ ձայն*
Gegenstoff *մ հականիւթ/-նյուլթ*
Gegenstoß *մ հակայարձակում/հակահարձ-
հակահարուած/-ված*
Gegenstrom *մ հակահոսանք*
Gegenströmung *ֆ հակահոսանք*
Gegenstück *ն ամբողջացուցիչ նմանակ*
Gegenteil *ն հակառակը. հակադրութիւն*
im ~ ընդհակառակը
gegenteilig *հակառակ, ներհակ*
Gegenteiligkeit *ֆ ներհակութիւն/-թյուն*
Gegenteilsbeweis *մ հակափաստ*
Gegentor *ն ֆթ հակաբերդ*
Gegentreffer *մ ֆթ հակաբերդ*
Gegentrend *մ հակահոսանք, հակաձգտում*
gegenüber *դէմ յանդիման, դիմաց. հանդէպ*
Gegenüber *ն -s,- դիմացինը. դիմացի տուն.
դիմացի անձ. դիմացի տեսարան*
gegenübergestellt *դէմդիմաց դրուած*
gegenüberliegen *չբ դիմացը գտնուել/գտնվել*
gegenüberliegend *դիմացի. հանդիպակաց*
gegenüber|setzen *նր քով-քովի/դէմ-դիմաց
դնել*
gegenüber|sitzen *չբ դիմացը նստիլ/նստել*
gegenüber|stehen *չբ դիմացը կայնիլ/կանգնել,
հակադրուել/հակադրվել*
gegenüber|stellen *նր քով-քովի/դէմ-դիմաց
դնել*
Gegenüberstellung *ֆ բաղդատութիւն/-թյուն,
համեմատութիւն/-թյուն*
gegenüber|treten *չբ դիմացը ելլել/ելնել. վիլլ
գբադիլ/գբադվել*
Gegenunterschrift *ֆ համատորագրութիւն*
Gegenveranstaltung *ֆ հակաձեռնարկ*
Gegenverkehr *մ դիմակառադնացութիւն*
Gegenverpflichtung *ֆ փոխպարտաւորութիւն*
Gegenversion *ֆ հակամեկնաբանութիւն/-յուն*
Gegenvisite *ֆ փոխադարձ այցելութիւն*
Gegenvorschlag *մ հակառաջարկ*
Gegenvorwurf *մ հակադանդատ*
Gegenwart *ֆ ներկայ/-կա. ներկայութիւն/-
ություն. թլլ ներկայ ժամանակ*
gegenwärtig *ներկայ. այսօրուան. ժամանա-
կակից. այժմու/այժմ յան*
Gegenwärtigkeit *ֆ ներկայութիւն/-ություն.
այժմէականութիւն/-եականություն*

gegenwarts *ի ներկայութիւն*
gegenwartsbezogen *այժմէական/-եական*
Gegenwartsbezug *մ այժմէականութիւն*
gegenwartsfern *ոչ այժմէական*
Gegenwartsform *ֆ թլլ ներկայ/-կա ժամանակ*
Gegenwartsfrage *ֆ այժմէական հարց*
gegenwartsfremd *ոչ այժմէական/-եական*
gegenwartsnah *այժմէական/-եական, մերօր-
եայ/-որյա*
Gegenwartsproblem *ն այժմէական հարց*
Gegenwartssprache *ֆ կենդանի լեզու*
Gegenwehr *ֆ ինքնապաշտպանութիւն/-թյուն*
Gegenwert *մ փոխարժէք/-եք. համարժէք/-եք*
Gegenwind *մ հակահոսանք*
Gegenwinkel *մ թլ դիմացի անկիւն/անկյուն*
Gegenwirkung *ֆ հակազդեցութիւն/ռեակցիա*
Gegenwort *ն հականիչ. պատասխան*
gegen|zeichnen *նր համատորագրել*
Gegenzeichnung *ֆ համատորագրութիւն/-յուն*
Gegenzeuge *հակավկայ/-վկա, հակառակ
կողմի վկայ/վկա*
Gegenzeugin *ֆ իլլ կին հակավկայ/-կա*
Gegenzug *մ հանդիպադնացք. պատասխան
քայլ [խաղերմ մէջ/խաղերմ]*
gegessen *կերած*
geglichen \Rightarrow gleichen *հաւասարած/հավա-*
gegliedert *դասաւորուած/-վորված. յօդաւոր-*
ուած/հոդավորված
geglitten \Rightarrow gleiten *սահած*
Geglitzer *ն -s ցոլք, պսպրանք. փայլք*
geglommen \Rightarrow glimmen
geglückt *յաջողած/ստացված*
Gegner *մ -s,- հակառակորդ, ընդդիմադիր*
Gegnerin *ֆ -,-nen կին հակառակորդ*
gegnerisch *հակառակորդ, ընդդիմադիր*
Gegnerschaft *ֆ - հակառակութիւն, թշնա-
մութիւն/-ություն, ընդդիմութիւն*
gegolten \Rightarrow gelten *ի գօրու եղած*
gegoren \Rightarrow gären *թթուած/թթված*
gegossen \Rightarrow gießen *ջրած. թափած*
gegr. gegründet *հիմնուած/հիմնված, հիմը
դրուած/-ված*
gegriffen \Rightarrow greifen *բռնած*
Gegrinse *ն -s իլլ քմծիծաղ, հեզնաժպիտ*
Gegröle *ն -s իլլ ճիչ, գոռում, բղավում*
Gegrübel *ն -s իլլ հոգ/հոգս, մտահոգութիւն/-
ություն*
Gegrünze *ն -s կռկռոց*
Gehabe *ն -s սնապարծ վարուելակերպ*
Gehacktes *ն -n աղացած/ծեծած միս*
Gehader *ն -s մշտական վէճ/վեճ, կռիւ/կռիվ*

Gehalt *m* -(e)s,-e բովանդակութիւն. պարունակութիւն. ծաւալ/ծավալ, տարողութիւն
Gehalt *n* -(e)s,er աշխատավարձ, ամսական, ռոճիկ, աշխատավճար
gehaltarm անսնդարար
gehalten պահանջելի. ակնկալելի
gehaltig բովանդակալից
gehaltlich բովանդակային
gehaltlos դատարկ, անբովանդակ. անսնունդ
Gehaltlosigkeit *f* դատարկութիւն. անբովանդակութիւն/-թյուն
gehaltreich իմաստալից. սննդարար
Gehaltsabrechnung *f* աշխատավարձի հաշուեցուցակ/հաշվեցուցակ
Gehaltsabzug *m* աշխատավարձէ/-ձից պակասում, գեղչում
Gehaltsanspruch *m* աշխատավարձի պահանջ
Gehaltsatz *m* աշխատավարձի չափորոշիչ
Gehaltsaufbesserung *f* աշխատավարձի բարելաւում/-վում
Gehaltsauszahlung *f* աշխատավարձի վճարում
Gehaltsbescheinigung *f* աշխատավարձի հաստատագիր
Gehaltsempfänger *m* աշխատավարձ ստացող
Gehaltsempfängerin *f* աշխատավարձ ստացող իգական անձ
Gehaltserhöhung *f* ամսականի յաւելում/ռոճիկի բարձրացում
Gehaltsforderung *f* աշխատավարձի պահանջ
Gehaltsgruppe *f* աշխատավարձի կարգ
Gehaltsklasse *f* աշխատավարձի դաս
Gehaltskategorie *f* աշխատավարձի դաս
Gehaltskonto *n* աշխատանքային հաշիւ/-իվ
Gehaltskürzung *f* աշխատավարձի գեղչում
gehaltsmäßig աշխատավարձի տեսակէտէն
Gehaltsmitteilung *f* աշխատավարձի յայտնում/հայտնում
Gehaltsnachzahlung *f* յաւելուածական/հավելվածական աշխատավարձ
Gehaltspfändung *f* ռոճկագրաւում/-վում
Gehaltsrückstand *m* ուշացած ռոճիկներ
Gehaltsschere *f* ռոճիկներու/-րի տարբերութիւն/-թյուն
Gehaltssperre *f* ռոճիկի խափանում
Gehaltsstreifen *m* ռոճկաթերթիկ
Gehaltsstufe *f* ռոճկասակ/ռոճկաչափ, դրույք
Gehaltstarif *m* ռոճկասակ/ռոճկաչափ, դրույք
Gehaltsverhandlung *f* աշխատավարձերու/-րի բանակցութիւններ/-յուններ
Gehaltsvorrückung *f* աշխատավարձի յաւելում/հավելում

Gehaltsvorschuss *m* աշխատավարձի հաշույն նախավճար
Gehaltsvorstellung *f* աշխատավարձի ակնկալութիւն/-ություն
Gehaltswunsch *m* աշխատավարձի փափաք
Gehaltszahlung *f* աշխատավարձի վճարում
Gehaltszettel *m* ռոճկաթերթիկ
Gehaltszulage *f* ռոճիկի յաւելադր/հավել-
Gehaltszuschlag *m* ռոճիկի հավելադր
gehaltvoll իմաստալից. սննդարար
Gehämmer *n* -s մրճահարում
Gehampel *n* -s դժուարին քայլուածք/քայլվածք
gehandikapt հաշմանդամ, խեղանդամ
Gehänge *n* -s,- լանջ. կախօն/կախոն, կախուած/-ված զարդ. կախուած լամպ. լանջազօտի/-դոտի
Gehängte *m/f* կախուած, մահուան դատապարտուած/-ված անձ
Gehänsel *n* -s իւր ծաղր, հեղնանք
geharnischt զրահապատուած/-ված. վիլլ պաշտպանուած/-ված
gehässig ատելի. չարամիտ, չարակամ. անախորժ. հակակրական
Gehässigkeit *f* չարամտութիւն, չարակամութիւն/-ություն
Gehäue *n* -s իւր կռոււտուք, ծեծուրտուք
gehauen զարնուած/-ված, հարուածուած/-ված/ված
gehäuft դիզուած/դիզված, կուտակուած/-ված
Gehäuse *n* -s,- պատեն/պատյան, պահպանակ
gehaut խորամանկ. սկրթած
Gehbahn *f* մայթ
gehbehindert հաշմ, հաշմանդամ, խեղանդամ
Gehbehinderung *f* քայլելու/քայլելու դժուարութիւն/դժվարութիւն
Geheck *n* -es,-e կի վայրի անասունի ձագ
Gehege *n* -s,- շրջապարիսպ. անասնավանդակ
geheiligt սրբացած. սուրբ
geheim գաղտնի. ծածուկ. անանուն. գաղտնօրէն, ծածուկ կերպով
G~abkommen *n* գաղտնի համաձայնութիւն
G~absprache *f* գաղտնի բանակցութիւն
G~agent *m* լրտես, գաղտնի գործակալ
G~agentin *f* լրտեսուհի
G~akt *m* գաղտնի փաստաթուղթ
G~auftrag *m* գաղտնի պատուէր/-վեր
G~ausgang *m* գաղտնի ելք
G~befehl *m* գաղտնի հրաման
G~bericht *m* գաղտնի տեղեկագիր
G~bund *m* գաղտնի միութիւն/-թյուն
G~code *m* գաղտնագիր

G~dienst *m* գաղտնի սպասարկութիւն/յուն
 ~ler *m* խաղաղտնի սպասարկութեան/յան
 պաշտօնեայ/պաշտոնյա
 ~lerin *f* խաղաղտնի սպասարկութեան
 իգական պաշտօնեայ
 ~dienstlich լրտեսականօրէն/-րեն
 G~diplomatie *f* գաղտնի դիւանագիտութիւն
 G~dokument *n* գաղտնի փաստաթուղթ
 G~e *f-n,-n* գաղտնի աշխատող բող
 G~eingang *m* գաղտնի մուտք
 G~er *m-en,-en* խաղաղտնի ոստիկան
 G~fach *n* գաղտնի արկղ/դարակ
 G~favorit *m* անձնական նախասիրութիւն/-
 ություն
 G~gang *m* գաղտնի ելք
 ~halten ճր գաղտնի պահել
 G~haltung *f* գաղտնապահութիւն/-ություն
 ~spflicht *f* գաղտնապահութեան պարտա-
 տրութիւն/-վորություն
 ~sstufe *f* գաղտնապահութեան/-յան աստի-
 ճան
 G~instruktion *f* գաղտնի պատուէր/-վեր
 G~kamera *f* գաղտնի լուսանկարիչ գործիք
 G~konferenz *f* գաղտնի ժողով
 G~kontakt *m* գաղտնի կապ
 G~konto *n* գաղտնի հաշիւ/հաշիվ
 G~lehre *f* գաղտնի վարդապետութիւն/-յուն
 G~nis *n* -ses,-se գաղտնիք. խորհուրդ. թա-
 քուն իրողութիւն/-թյուն
 G~krämer *m* խաղաղտնապահ անձ
 G~krämerei *f* խաղաղտնապահութեան
 պահութիւն/-ություն
 ~krämerisch չափազանցուած գաղտնապա-
 հութեամբ
 G~träger *m* գաղտնադէտ/-գետ
 G~trägerin *f* գաղտնագիտուհի
 G~tuerei *f* խաղաղտնապահութեան
 պահութիւն/-ություն
 ~umwittert գաղտնի, խորհրդաւոր/-վոր
 ~umwoben գաղտնի, խորհրդաւոր/-վոր
 G~verrat *m* գաղտնիքի ուրացում
 ~voll խորհրդաւոր/-ավոր, առեղծուա-
 ծային/-ծվածային
 G~nummer *f* գաղտնի թիւ/համար
 G~operation *f* գաղտնի գործողութիւն
 G~organisation *f* գաղտնի կազմակերպու-
 թիւն/-թյուն
 G~pakt *m* գաղտնի համաձայնութիւն/-յուն
 G~polizei *f* գաղտնի ոստիկանութիւն/-յուն
 G~polizist *m* գաղտնի ոստիկան
 G~polizistin *f* գաղտնի ոստիկանուհի
 G~ratsecken յգ ընկերկող մագեր (քունքերուն վրայ)

G~rezept *n* գաղտնի խոհագիր. գաղտնի
 ձեւագիր
 G~sache *f* գաղտնիք. գաղտնի բան
 G~schloss *n* գաղտնաթիւղով կղպանք/կող-
 պեք
 G~schrift *f* ծածկագիր, կէտագիր/կետա-
 G~schublade *f* գաղտնի դարակ
 G~sekte *f* գաղտնի աղանդ
 G~sender *m* գաղտնի ռադիոկայան
 G~sitzung *f* գաղտնի ժողով
 G~sprache *f* գաղտնի լեզու
 ~sprachlich գաղտնի լեզուով
 G~strategie *f* գաղտնի ռազմավարութիւն/
 ստրատեգիա
 G~tasche *f* ծածուկ գրպան
 G~text *m* գաղտնի գրութիւն
 G~tinte *f* անտեսանելի մեյլան/թանաք
 G~tipp *m* գաղտնի տեղեկութիւն/-թյուն
 G~treff *n* գաղտնի հանդիպում
 G~treppe *f* գաղտնի աստիճան
 G~tuer *m* գաղտնապահութիւն ընող այր
 G~tuerei *f* գաղտնապահութիւն/-թյուն
 G~tuerin *f* գաղտնապահութիւն ընող էգ
 ~tuerisch գաղտնապահութեամբ
 ~tun ջր գաղտնապահութիւն/-ություն
 ընել/անել
 G~tür *f* գաղտնի դուռ
 ~umwoben գաղտնի. խորհրդաւոր/-վոր
 G~verfügung *f* գաղտնի կարգադրութիւն
 G~verhandlung *f* գաղտնի բանակցութիւն
 G~versammlung *f* գաղտնի ժողով
 G~versteck *n* գաղտնի պահուցում,
 թաքստոց
 G~vertrag *m* գաղտնի համաձայնագիր
 G~waffe *f* գաղտնի զէնք/զենք
 G~wissenschaft *f* գաղտնի գիտութիւն/
 գիտություն
 G~zahl *f* գաղտնի թիւ/թիվ
 G~zeichen *n* գաղտնի նշան
 G~ziffer *f* գաղտնի թիւ
 Geheiß *n* -(e)s հրաման, հրահանգ, /պատվեր
 geheimt *am* չկողտ, քաշուող/ամաչող
 Gehemtheit *f* ամչկոտութիւն. անհամարձա-
 կութիւն/-թյուն
 gehen ջր երթալ/գնալ. քալել/քայլել. մեկնել/
 մեկնել. հեռանալ. յաճախել/հաճախել.
 ուղևորուել/ ուղևորվել. հրաժարել/հրա-
 ժարվել. գործել [սարք]. վիս մեռնել/-ել. տեւել.
 փչել. տանիլ/տանել
 ~ als ձևանալ որպէս. ձևացնել
 nach Hause ~ տուն երթալ/գնալ. տուն
 վերադառնալ

an die Arbeit ~ գործի երթալ/գնալ
 in Pension ~ Հանգստեան կոչուել/կոչվել
 wie geht es Ihnen? dir? Ի՞նչպէս էք. Ի՞նչպէս էս
 das geht nicht! այդպէս չըլլար/չդպես չլինի
 was geht hier vor sich? Ի՞նչ կը պատահի հոս
 / Ի՞նչ է պատահում հոս
 es geht միջակ, որպիսութիւնը միջակ է
 die Uhr geht nicht ժամացոյցը աւրուած է/
 չի աշխատում
 das geht nicht այդպէս չըլլար/չի լինի
 es geht um Leben und Tod շատ լուրջ հարց
 է
 spazieren ~ պտըտիլ/ման գալ
 in die Luft ~ զայրանալ, սաստիկ բարկանալ
 ins Einzelne ~ մանրամասնել. մասնաւորել/
 -վորել
 mit einem Mädchen ~ աղջկայ մը հետ
 յարաբերիլ/հարաբերվել
 sich ~ lassen անփոյթ վարուել/անփոյթ
 վարվել
 über Leichen ~ անգթօրէն վարուել/վարվել.
 նպատակի համար ամէն ինչ գոհել
 3 geht in 9 dreimal 9 երեքով երեք անգամ
 կը բաժնուի/կբաժանվի
 das Telefon geht ununterbrochen հեռաձայ-
 նը/հեռախօսը անդադար կը հնչէ
 die Vase wird kaputtgehen ծաղկամանը
 պիտի փշրուի/փշուր փշուր կլինի
 geh! հայտէ. վրաս գրէ
 zu Fuß ~ քալելով երթալ/քայլելով գնալ
 zu weit ~ չափազանցել, չափը անցընել
 Gehen n -s,- ակ քայլարշաւ/-արշավ. քալուածք
 /քայլածք
 gehen|lassen նր հանգիստ ձգել/թողնել.
 sich ~ չր ինքզինք/ինքիրեն չկարենալ զսպել
 Geher m -s,- քայլարշաւորդ/-վորդ. քալող
 Geherin f -,-nen քայլարշաւորդուհի. քալող էգ
 Gehetze m -s խաւածակարանք, շտապում
 gehetzt հալածուած/-ված. նեղացուած/-ված
 geheuer պատշաճ, կարգին
 Geheul n -s ոռնոց. բղավոց
 Gehgerät n քալելու/քայլե- օգնական գործիք
 Gehilfe m -n,-n օգնական, սատար
 Gehilfenschaft f պջ օգնականութիւն/-ություն
 Gehilfin f -,-nen օգնականուհի
 Gehirn n -(e)s,-e կլ ուղեղ. վիս խելք. խելացու-
 թիւն. հնարամտութիւն/-թյուն
 Gehirnakrobatik f կլ մտամարզանք, մտա-
 մարզութիւն, մտավարժութիւն/-թյուն
 Gehirnanhang m կլ ուղեղագեղձ

Gehirnblutung f բժ ուղեղի արիւնահոսութիւն
 /արյունահոսություն
 Gehirnchirurg m բժ ուղեղի վերաբոյժ/խիրուրդ
 Gehirnchirurgie f բժ ուղեղի վերաբուժութիւն
 Gehirnchirurgin f բժ ուղեղի կին վերաբուժ
 Gehirndruck m բժ գանկային ճնշում
 Gehirnentzündung f բժ ուղեղի բորբոքում,
 ուղեղատապ
 Gehirnerschütterung f բժ ուղեղի ցնցում
 Gehirnerweichung f բժ ուղեղի կակղացում
 Gehirngeschwulst f բժ ուղեղայտուց (վատորակ
 կամ յատորակ)
 Gehirnhaut f կլ ուղեղաթաղանդ
 Gehirnhautentzündung f բժ մզնատապ/մենին-
 գիտ, ուղեղաթաղանդի բորբոքում
 Gehirnjogging n ուղեղամարզանք
 geirnllich ուղեղային
 Gehirnmantel m կլ ուղեղաթաղանթ
 Gehirnnerv m կլ գանկային ջիղ
 Gehirnoperation f բժ ուղեղային գործողու-
 թիւն/վիրահատություն
 Gehirnpunktion f բժ ուղեղահիւսկէնի/-հյուս-
 կենի ընկալում
 Gehirnrinde f կլ ուղեղաթաղանթ
 Gehirnschädigung f ուղեղային վնաս
 Gehirnschlag m բժ կաթուած/կաթված,
 իջուածք/իջվածք
 Gehirnschwund m բժ ուղեղի հիւծում/հյուծ-
 Gehirntod m ուղեղամահ
 Gehirntumor m բժ ուղեղախլիբոք, ուղեղուս
 Gehirnentrikel m կլ ուղեղախոռոչ
 Gehirnwäsche f ուղեղի լուացում/լվացում
 Gehirnzelle f կլ ուղեղային բջիջ
 Gehling m րս սունկի տեսակ
 gehoben ⇒ heben բարձրաստիճան. բարձրա-
 ցուած/-ված
 Gehöft n -(e)s,-e ագարակ. կալուած/կալված
 ~besitzer m ագարակատէր/-տեր
 geholfen ⇒ helfen
 Geholper m -s ընդհարում. բախում
 Gehölz n -es,-e պուրակ, փոքր անտառ
 Gehölze n -s ակ խա վատ խաղ
 Gehoppel n -s ցատկուտուք, ոստոստում
 Gehör n -(e)s լսողութիւն. ականջ [երսւշտական].
 վիս ուշադրութիւն/-ություն
 jdm ~ schenken մէկուն/մեկին մտիկ ընել/
 անել
 Gehörbildung f ականջի մարզում
 gehorchen հնազանդիլ/հնազանդվել. ենթար-
 կուիլ/ենթարկվել, անսալ
 gehören չր պատկանիլ/պատկանել. վերաբերիլ
 /վերաբերվել. դասուիլ/դասվել. վայելել

sich ~ չք պատշաճ ըլլալ/լինել
Gehörfehler *m* լսողական թերութիւն/-թյուն
Gehörfeld *n* լսադաշտ
Gehörgang *m* կլ միջնականջ
Gehörgebrechlicher *m* ծանրականջ անձ
gehörig պատկանող. պատշաճ. իս փառաւոր/-
 վոր, առջնակարգ. լրջօրէն/-որեն
gehörlos խուլ. ծանրականջ
Gehörlose *m/f* խուլ, ծանրականջ անձ
Gehörn *n* -(e)s,-e եղջիւրներ/պոզեր, կոտոշներ
Gehörnerv *m* կլ լսաջիղ/լսանյարդ
gehört կոտոշաւոր/կոտոշավոր. իս փիւ խաբ-
 ուած (ամուսին)
Gehörorgan *n* կլ ականջ
gehorsam հնազանդ. ենթարկուող, հլու
Gehorsam *m* -s հնազանդութիւն, հլութիւն/-
 ություն. անսպորտութիւն/-թյուն
Gehorsamkeit *f* հնազանդութիւն/-ություն
Gehorsamsverweigerung *f* հնազանդութեան/-
 յան գլացում. ըմբոստացում
Gehörschutz *m* ականջակալ
Gehörsinn *m* լսողութիւն, լսելու զգայարանք
gehörmäßig լսողական/ակուստիկական
Gehörsturz *m* ժամանակաւոր/-վոր խլութիւն
 /-ություն
Gehre *f*,-*n* կոնաձև փէշ/փեշ. կոնաձև ատաղ-
 ձակտոր
gehen իր շեղ կտրել. շեղ ճեղքել
Gehrock *m* արական երկար բաճկոն
Gehrung *f*,-*en* կոնաձև ատաձղակտոր
Gehschule *f* նորածինի ապահովուած գրաս-
 վայր/ապահովված գրասովայր
Gehsteig *m* -(e)s,-e մայթ
Gehtnichtmehr: bis zum ~ իս մինչև հանդուր-
 ժողութեան/-յան սահման
Gehübung *f* իլ քայլարշաւ/-արշավ, քայլա-
 մարզանք
Gehupe *n* -s մշտական ճշակում
gehupft: das ist ~ wie gesprungen նոյն բանն է
Gehuste *n* -s իս հագ, հագալը
Gehversuch *m քայլելու/քայլելու փորձ
Gehwagen *m* քայլասարք
Gehweg *m* արահետ, կածան, ուղի
Gehweite *f* քայլելիք/քայլելիք հեռաւորու-
 թիւն/-վորութիւն
Gehwerk *n* թք աշխատամուկ
Gei *f*,-*e* առագաստապարան
geien իր առագաստ բարձրացնել
Geier *m* -s,- ին անդ. ուրուր. ցին
Geifer *m* -s,-*e* լորձոնք. փիւ չարախօսութիւն/-
 խոսութիւն. բարկութիւն/-թյուն*

geifern չք լորձոնքոտի/լորձոնքոտիւ. փիւ
 կատղի/կատողել, բարկանալ
Geige *f*,-*n* եր ջութակ
geigen չք ջութակ նուագել/նվագել
Geigenbauer *m* ջութակ շինող արհեստագէտ
Geigenbogen *m* ջութակի աղեղ
Geigenharz *n* ջութակահարի ռետին
Geigenkasten *m* ջութակի պահպանակ, տուփ
Geigensaite *f* ջութակի լար
Geigenspieler *m* ջութակահար, ջութակածու
 ~*in* *f* ջութակահարուհի
Geigenstrich *m* աղեղի հարուած/-ված
Geiger *m* -s,- ջութակահար, ջութակածու
Geigerin *f*,-*nen* ջութակահարուհի
Geigerzähler *m* թն շողագործօնութիւն չափող
 գործիք
geil վաւաշոտ/վավաշոտ, տուփոտ, կրքոտ.
 պարարտ
Geile *f* - վաւաշոտութիւն/վավաշոտութիւն,
 տուփոտութիւն/տուփոտութիւն
geilen չք տուփանալ. վաւաշոտիլ/վավաշոտվել
Geilheit *f* - վաւաշոտութիւն, տուփոտութիւն
Geisel *f*,-*n* պատանդ. գերի
Geiseldrama պատանդառումի ողբերգութիւն
Geiselhaft *f* պատանդի բանտարկութիւն/յուն
Geiselnahme *f* պատանդառում
Geiselnehmer *m* պատանդառու
Geiser, Geysir *m* -s,- ջերմաղբիւր/-աղբյուր
Geiß *f*,-*en* ին էգ նոխագ, էգ այծ
Geißbart *m* այծեմօրուք/-մորուս, փնջնի
Geißblatt *n* թս ցախակեռաս, բալխուր
Geißblattgewächse *n* յգ թս այծտերեւ
Geißbock *m* ին աւ արու այծ
Geißel *f*,-*n* խարազան. պատիժ, պատուհաս
Geißelbruder *m* ինքզինք/ինքիրեն խարազա-
 նող ճգնաւոր/-վոր
geißeln իր խարազանել. պատժել
Geißeltierchen *n* ին միաբջիջ ձողկազգի
Geißelung *f*,-*en* խարազանում
Geißfuß *m* թս այծոտն
Geißler *m* -s,- խարազանող
Geist *m* -es,-er ոգի. հոգի. միտք. հանճար.
 ուրուական. կորով. սրամտութիւն/-թյուն
Geist *m* -(e)s,-e իս ալքոլ/սպիրտ. վառելանիւթ
geistarm տկարամիտ. պակասամիտ
geistbildend մտամշակային
Geistchen *n* ին թիթեռնիկի տեսակ
Geisterbahn վախազդեցիկ գնացքողի (ժամաց)
Geisterbeschwörer *m* ոգեհարց, մեռելահարց
 ~*in* *f* ոգեհարց կին, մեռելահարց կին
Geisterbeschwörung *f* ոգեհարցութիւն, մեռե-
 լահարցութիւն/-ություն

geisterbleich դարձակ, դարձադեմ/-դեմ
 Geistererscheinung ֆ ոգիներու/-րի երևում
 Geisterfahrer Թ ճեպուղիի վրայ հակառակ
 ուղղութեամբ սուրացող վարորդ
 Geisterglaube Թ հաւատք/հավ- ոգիներու/-րի
 geisterhaft ուրուականային. տարօրինակ
 Geisterhand: wie von/durch ~ մոգականօրէն
 geistern ջր թափառելի/-ել. Թ ոգիներով լեցուն
 ըլլալ/լինել
 Geisterseher Թ ոգետես, ուրուականատես
 ~in ֆ ոգետես, ուրվականատես էգ
 Geisterspiel Թ անհանդիսատես խաղ
 Geisterstadt ֆ ամայացած քաղաք
 Geisterstunde ֆ կէս գիշերին յաջորդող ժամ
 Geisterwelt ֆ ոգիներու/-րի աշխարհ
 geistesabwesend մտացիր, ցրուած/ցրված
 Geistesabwesendheit ֆ ցրուածութիւն, մտա-
 ցրութիւն/-ություն
 Geistesarbeit ֆ մտային աշխատանք
 Geistesarbeiter Թ Թ մտաւորական/-վորական
 ~in ֆ Թ մտաւորականուհի/-վորա-
 Geistesarmut ֆ մտաւորական աղքատութիւն
 Geistesart ֆ մտային տրամադրութիւն/-թյուն
 Geistesblitz Թ մտային փայլատակում
 Geistesgabe ֆ մտային կարողութիւն/-թյուն
 Geistesgegenwart ֆ արթնութիւն, զգօնութիւն
 /զգոնություն, զգաստութիւն/-թյուն
 geistesgegenwärtig արթուն. պատրաստաբան.
 զարթուն. զգաստ. ուշադիր. աչալուրջ
 geistesgestört մտահիւանդ/-հիվանդ, հոգեհի-
 ւանդ/-հիվանդ
 Geistesgestörte Թ/ֆ հոգեկան հիւանդ/-վանդ
 Geistesgestörtheit ֆ հոգեկան հիւանդութիւն
 Geistesgröße ֆ հոգեկան ազնուութիւն/ազնվու-
 թյուն. հանճարեղութիւն/-թյուն
 Geisteshaltung ֆ հոգեկան կեցուածք/-վածք
 Geisteskraft ֆ հոգեկան ուժ
 geisteskrank հոգեպէս/-պէս հիւանդ/հիվանդ
 Geisteskrank Թ/ֆ հոգեկան հիւանդ/-վանդ
 Geisteskrankheit ֆ Թ հոգեկան հիւանդութիւն
 Geistesleben Թ մտաւորականի կեանք
 Geistesmensch Թ միտքի մարդ, մտաւորական
 Geistes schaffen Թ մտաւորական ստեղծագոր-
 ծութիւն/-թյուն
 geistesschwach տկարամիտ, պակասամիտ
 Geistes Schwäche ֆ տկարամտութիւն, պակա-
 սամտութիւն/-թյուն
 Geistesstärke ֆ հոգեկան զօրութիւն
 Geistesstörung ֆ հոգեկան խանգարում
 Geistesstat ֆ հոգեկան արարք
 geistesträge բխամիտ. ծանրամիտ

Geistesträgheit ֆ ծանրամտութիւն/-թյուն,
 տկարամտութիւն, թուլամտութիւն/-թյուն
 Geistesverfassung ֆ հոգեվիճակ. մտավիճակ
 geistesverwandt հոգեպէս/-պէս առնչակից/
 առնչութիւն ունեցող
 Geistesverwandtschaft ֆ հոգեկան առնչութիւն
 Geistesverwirrung ֆ մտային շփոթուածու-
 թիւն/-վածութիւն
 Geisteswelt ֆ ոգեկան աշխարհ
 Geisteswissenschaft ֆ ոչ գիտական ուսում,
 ընկերային գիտութիւններ/հումանիտար
 գիտութիւններ
 ~ler Թ ընկերային գիտնական
 ~lerin ֆ ընկերային գիտնականուհի
 g~lich ընկերագիտականօրէն/-որէն
 Geisteszustand Թ մտային վիճակ
 geistfeindlich ապամտաւորական/-վորական
 Geistfeindlichkeit ֆ ապամտաւորականութիւն
 Geistheiliger Թ ոգեհարց բժիշկ
 ~in ֆ ոգեհարց բժշկուհի
 Geistheilung ֆ ոգեհարցական բժշկութիւն
 geistig հոգեւոր, հոգեկան. մտային, մտաւորա-
 կան. ոգելից. աննիւթական/աննյութական
 Geistigkeit ֆ- հոգեկանութիւն/-ություն.
 մտաւորականութիւն/-վոր-թյուն
 geistlich հոգեւորական. եկեղեցական
 Geistliche Թ -Ո, -Ո հոգեւորական. վարդապետ
 Geistlichkeit ֆ հոգեւորականութիւն/-թյուն
 geistlos անընդունակ, անշնորհ. անտարբեր.
 անհնարամիտ. անխանդավառ
 Geistlosigkeit ֆ անշնորհութիւն/-ություն.
 անընդունակութիւն/-ություն
 geistreich սրամիտ. ուշիմ. հնարագէտ/-գետ
 Geistreichelei ֆ -, -en սրամտութիւն. հնարագի-
 տութիւն/-թյուն
 geistsprühend մտափայլուն, խիստ սրամիտ
 geisttötend միապաղաղ, անհետաքրքրական
 geistvoll սրամիտ. ուշիմ. հնարագէտ/-գետ
 Geiz Թ -es կծծիութիւն, ազահութիւն, ժլատ-
 ութիւն/-ություն
 geizen ջր կծծիանալ. ստորնանալ
 Geizhals Թ ազահ/կծծի մարդ, զցուց
 geizig ազահ, կծծի, ժլատ, զցուց
 Geizkragen Թ ազահ/կծծի մարդ
 Gejammer Թ -s ողբ, լաց ու կոծ
 Gejauchze Թ -s ցնծութիւն/-ություն. հրճուանք
 /հրճվանք
 Gejaule Թ վնդոց, կաղկանձ
 Gejohle Թ -s ճիչ/բղավանք, պոռչտուք. աղա-
 դակ. աղմուկ
 gek. gekürzt համառօտուած/-ռոտված
 gekannt ⇒ kennen

Gekeife *n-s* պոռչտուք/բղավանք, վաճառու, գոչիւն/գոչյուն, կանչվոտուք
Gekicher *n-s* քրքիջ, չար խնդուք, քահքահ
Gekicke *n-s* ոտնահարուած/-ված
Gekläff *n-(e)s* կաղկանձ. հաչիւն/հաչյուն
Geklapper *n* խաղաղուկ. խշրտուք
Geklatsche *n-s,-e* բամբասանք. ծափ
gekleidet հագցուած/-ցված, զգեստաւորուած/
 -վորված
Geklimper *n-s* խաղաղիւն/թնդյուն. դղրդիւն
 /դղրդյուն, թնդոց, բոմբիւն/բոմբյուն
Geklingel *n-s* զանգ. զանգում. զանգահարում
Geklirr *n-(e)s* շառաչ, զրնգոց
geklommen ⇒ **klimmen**, մագլցած
Geklön *n-(e)s* խաղաղուկ խօսակցութիւն/
 գրույց
Geklopfe *n-s* բախում. ծեծում (գողգ. ...) զարկ
geklungen ⇒ **klingen**, հնչած
Geknall *n-(e)s* պայթում/պայթյուն. ճոխնչ
Geknarr *n-(e)s* ճոնչում, ճոնչիւն/ճոնչյուն
Geknatter *n-s* ոռնոց. դոփիւն/դոփյուն
geknickt ծալուած/ծալված. փխ մոռայլ, տխուր.
 րնկճուած/-ված
gekniffen ⇒ **kneifen**, կամթած
Geknipse *n-s* խաղաղանկալ լուսանկար
Geknist *n-s* ճոճոց, ճարճատիւն/-տյուն
geknüppelt: ~ **voll** լեփ լեցուն
gekonnt ⇒ **können**
Gekrächz *n-es* կոկոնոց, կոնչոց
Gekrakel *n-s* խաղաղում, անճոռնի գրու-
 թիւն/-ութիւն
Gekratze *n-s* քերում, քերելը
gekräuselt ալիքաւոր/-վոր. փոթփոթած
Gekreisch *n-es,-e* ծկլթոց. ճոնչոց
Gekrieche *n-s* սողոսկում, սողացում
Gekritz *n-s* խզմզում. փխ անընթեռնելի գիւր
gekrochen ⇒ **kriechen**, սողացած
Gekröse *n-s* կլմիջընդերաթաղանթ. փորոտիք
gekühlt պաղ/սառը. զովացուած/-ված
gekünstelt արուեստական/արհեստական,
 շինծու, անբնական
Gekünsteltheit *f* արուեստականութիւն/ար-
 հեստականութիւն
Gel *n-(e)s,-e* մածնիտ, դոնդոց
gel? (gell? Gelt?) խաղաղութիւն չէ՞, ճիշդ չէ՞
Gelaber *n-s* դատարկախօսութիւն, դատարկա-
 բանութիւն. ճոռոմաբանութիւն/-ութիւն
Gelächter *n-s,-* ծիծաղ, քրքիջ, քահքահ
gelackmeiert խաբուած/-ված, մոլորեցուած
Gelage *n-s,-* խնճոյք/խնջույք, կերուխում,
 գինարբուք

gelagert տրամադրուած/-ված. բնութաւոր-
 ուած/-վորված
gelähmt անդամալոյծ/-լույծ. կաթուածահար
 /կաթվածահար
Gelähmte(r) *m* անդամալոյծ անձ
Gelähmtheit *f*- անդամալուծութիւն. հաշման-
 դամութիւն. կաթուածահարութիւն/-վածա-
 թիւն
gelahrt ուսեալ/-յալ. իմաստուն
Gelahrtheit *f*- ուսում. բանիմացութիւն/
 թիւն
Gelände *n-s,-* հողամաս, տարածութիւն/
 ութիւն. վայր, տեղ. գետին, հող
Geländefahrt *f* արտաքաղաքային կառագնա-
 ցութիւն/-ութիւն
Geländefahrzeug *n* չարքաչ կառք/ավտո
geländegängig արտաքաղաքային տեղափո-
 խութիւններու/-յուններու յարմար/հարմար
Geländehobel *m* հարթասարքիչ/բուլղոգեր
Geländelauf *m* ան տարածավայր/կրոսավայր
Geländemarsch *m* արտաքաղաքային քայլար-
 շաւ/-չափ
Geländer *n-s,-* բազրիք, ճաղաչար
Geländerad *n* չարքաչ հեծիկ
Geländerennen *n* արտաքաղաքային վազք
Geländeritt *m* դաշտային ձիավարութիւն/յուն
Geländewagen *m* չարքաչ կառք, ճիւղ/ջիւղ
gelang ⇒ **gelingen**
gelangen չր հասնիլ/հասնել [տեղ, նպատակի]. պ
 հարցափորձել
gelappt բլթակաւոր/-ավոր
Gelärme *n-s* խաղաղուկ, ժխոր, գոռոց/բղա-
 վոց, վլվլուկ
Gelass *n-(e)s,-e* փոքր սենեակ/-յակ. գետեղա-
 րան
gelassen հանդարտ/օրէն, անայլայլ, պաղարիւն
 /պաղարյուն, զգօն/զգոն
Gelassenheit *f* հանդարտութիւն. զգօնութիւն/
 զգոնութիւն. պաղարիւնութիւն/-արյունու-
 թիւն
Gelatine *f*- դոնդոց/ժելատին. մածնիտ
gelatinieren նր դոնդոցել. մածնիտել
Geläuf *n-(e)s,-e* ձիարշախի/-չափի մրցողի-
 արածատարածք
Gelaufe *n-s* վազվզուք. վազվոտուք
geläufig սովորական. համայնական. սահուն.
 վարժ. ծանօթ/-նոթ. ընթացիկ
Geläufigkeit *f* համայնականութիւն/-ութիւն.
 սահունութիւն/-թիւն
gelaunt տրամադրուած/տրամադրված
Geläut *n-(e)s,-e* զանգ, զնգոց
gelb դեղին

Gelbei *n* դեղնուց
Gelberling *m* բլ սուռնի տեսակ
gelberübingarben նարնջագոյն/-գույն
Gelbfieber *n* թժ դեղին տենդ
gelbgrün դեղնորակ կանանջ
Gelbkreuz *n* թժ խիստ թուլակոր/-վոր կազ մը
gelblich դեղնորակ
gelblichweiß դեղնորակ սպիտակ
Gelbling *m* -s,-e բլ հրաւիրակ/հրավիրակ
gelborange դեղնորակ նարնջագոյն
gelbrot դեղնորակ կարմիր
Gelbrübe *f* բլ դեղնորակ ճակնդեղ
Gelbschenkel *m* կն ճնճղուկի տեսակ
Gelbschnabelkuckuck *m* կն դեղնակտուց կկու
Gelbsenf *m* դեղնորակ մանանեխ
Gelbspötter *m* կն դեղնիկ (գեղգեղող թշուճ)
Gelbsucht *f* թժ դեղնախտ
Gelbwurz *f* բլ հնդկական քրքում
Geld *n* -es,-er դրամ/փող, ստակ, սակարանի սակ. վիս հարստութիւն/-թյուն, ունեցուածք
am ~ hängen/kleben կծծի ըլլալ/լինել, ընչաքողց ըլլալ/լինել
~ oder Leben! ձեր դրամը կամ կեանքը/կյանքը (գողի սպառնալիք)
~ und Gut դրամ և ստացուածք/-վածք
bares ~ կանխիկ դրամ
falsches ~ կեղծ դրամ
im ~ schwimmen շատ հարուստ ըլլալ/լինել
sein ~ arbeiten lassen իր դրամը շահաբեր կերպով գործածել
zu ~ machen դրամի վերածել
Geldabwertung *f* դրամի արժէքագրկում/-ժե-
Geldadel *m* բարեկեցիկ դասակարգ
Geldangelegenheit *f* դրամական հարց
Geldanlage *f* լս դրամի ներդրում
Geldanleger *m* դրամ ներդրող
Geldanweisung *f* լս դրամի առաքում, փոխանցում
Geldaufwertung *f* դրամի վերարժեքում
Geldausgabe *f* ծախս, դրամական ելք
Geldautomat *m* դրամաբաշխ գործիք
Geldbehebung *f* դրամահանում, դրամի ստացում
Geldbetrag *m* դրամական գումար
Geldbeutel *m* դրամապանակ, գրպանի քսակ
Geldbörse *f* դրամապանակ, գրպանի քսակ
Geldbote *m* դրամաբեր. ծրարաբեր
Geldbrief *m* լս արժեթուղթ
Geldbüchse *f* գանձանակ, գանձատուփ
Geldbündel *n* թղթադրամի արցակ
Geldbuße *f* տուգանք, տոյժ/տույժ
Gelddarlehen *n* դրամական փոխատուութիւն

Gelddinge *pl* դրամական հարցեր
Geld Drehscheibe *f* դրամական գործողութեանց/-յանց կեդրոն/կենտրոն
Geldeinheit *f* դրամական միաւոր/միավոր
Geldeinlage *f* լս դրամական ներդրում
Geldeinwurf *m* մետաղադրամ գցելու ճեղք
Geldentschädigung *f* դրամական փոխհատուցում
Geldentwertung *f* դրամի արժեզրկում. սղաճ
Gelderwerb *m* դրամական շահ բերող գրա-
Geldfälschung *f* դրամանենդութիւն/-թյուն
Geldfluss *m* դրամական հոսք
Geldforderung *f* դրամական պահանջ
Geldfrage *f* դրամի հարց
Geldgebarung *f* լս դրամական գործառնութիւն/-թյուն
Geldgeber *m* -s,- վարկատու, դրամատու այր
~in f,-nen վարկատու, դրամատու կին
geldgeil դրամասէր/-սեր, փողասէր/-սեր
Geldgeschäft *n* դրամի առուծախ
Geldgeschenk *n* դրամական նուէր/նվեր
Geldgier *f* դրամասիրութիւն. ընչաքողցութիւն/-ություն
geldgierig դրամասէր/-սեր. ընչաքողց
Geldgürtel *m* դրամատար գօտի/գոտի
Geldhahn *m* վիս դրամի աղբիւր/աղբյուր
Geldheirat *f* դրամական ամուսնութիւն/-յուն
Geldherrschaft *f* դրամատիրութիւն/-ություն
Geldhüter *m* վիս ելեւմտական նախարար
geldig լս լս հարուստ, դրամ ունեցող
Geldinstitut *n* լս դրամատու/բանկ
geldlich դրամական. ֆինանսական
Geldkarte *f* դրամատնային քարտ
Geldkassette *f* դրամատուփ. գանձատուփ
Geldkasten *m* դրամարկղ
Geldkatze *f* գօտիին վրայ կրուած դրամապանակ
Geldklemme *f* դրամական նեղ դրութիւն
Geldknappheit *f* դրամի տագնապ
Geldkoffer *m* դրամալի ճամպրուկ
Geldkreislauf *m* դրամական շրջանառութիւն
Geldkurs *m* լս դրամասակ
Geldleistung *f* դրամական վճարում
geldlich դրամական, ֆինանսական
Geldlohn *m* դրամական ուժիկ
Geldmacherei *f* -,en ապօրինի դրամաշահութիւն/-թյուն
Geldmangel *m* դրամի պակաս
Geldmann *m* դրամասէր/կապիտալիստ
Geldmarkt *m* լս դրամական շուկայ/-կա

geldmäßig *f* դրամական տեսակէտէն. ֆինանսական
 Geldmenge *f* դրամական գումար
 Geldmittel *n* դրամ, ֆինանսական միջոց
 Geldnot *f* դրամի սագնապ, նեղութիւն/-թյուն
 Geldparkplatz *m* փխ դրամական ներդրումի ապահով տեղ
 Geldpolitik *f* դրամական քաղաքականութիւն/-ություն
 Geldpolster *m/n* դրամական պահեստ
 Geldprämie *f* վարձատրագումար
 Geldpreis *m* մրցագումար
 Geldproblem *n* դրամական խնդիր
 Geldquelle *f* դրամի աղբիւր/աղբջուր
 Geldregen *m* փխ անակնկալօրէն ստացուած մեծ գումար
 Geldrolle *f* մետաղադրամի փաթոյթ/-թույթ
 Geldsache *f* դրամական հարց
 Geldsack *m* դրամի տոպրակ
 Geldsammlung *f* դրամահաւաք/-հավաք, հանգանակութիւն. մետաղադրամներու/-երի հաւաքածոյ/-ծով
 Geldschein *m* ար դրամանիշ, թղթադրամ
 Geldschneiderei *f* -,en ապօրինի դրամաշահութիւն/-թյուն
 Geldschöpfung *f* հարստութեան/-յան ստեղծում, դրամի գոյառում
 Geldschrank *m* դրամարկղ, դանձարկղ ~knacker *m* դրամարկղի գող
 Geldschuld *f* դրամական պարտք
 Geldschwall *m* փխ դրամի առատութիւն/յուն
 Geldschwemme *f* ար դրամի առատութիւն
 Geldschwierigkeiten *pl* դրամական դժուարութիւններ/դժվարություններ
 Geldsendung *f* դրամի առաքում
 Geldsorgen *pl* դրամական հոգ, պարտք
 Geldsorte *f* դրամի/փողի տեսակ
 Geldspende *f* դրամական յատկացում/հատկ-, նուիրատուութիւն/նվիրատվություն
 Geldspiel *n* բախտախաղ
 Geldspielautomat *n* բախտախաղի մետաղադրամային գործիք
 Geldspritze *f* ար դրամական ներդրում
 Geldstrafe *f* դրամական տուգանք
 Geldstück *f* մետաղադրամ
 Geldsumme *f* դրամական գումար
 Geldtasche *f* դրամապանակ, քսակ
 Geldtransfer *m* ար դրամական փոխանցում
 Geldtransport *m* դրամի փոխադրութիւն/յուն ~er *m* գրահապատ բեռնակառք
 Geldumlauf *m* դրամի շրջագալութիւն/-յուն
 Geldumtausch *m* լումայափոխութիւն/-թյուն

Geldverdiener *m* դրամ շահող այր ~in *f* դրամ շահող էգ
 Geldverkehr *m* դրամի շրջանառութիւն/-յուն
 Geldverlegenheit *f* դրամի պակաս
 Geldverleiher *m* դրամատու, վարկատու
 Geldverlust *m* դրամական վնաս
 Geldverschwendung *f* դրամի մսխում
 Geldvolumen *n* գումար, դրամաքանակ
 Geldwäsche *f* ապօրէն դրամի օրինականացում
 Geldwäscher *m* ապօրէն դրամ օրինականացնող
 Geldwechsel *m* լումայափոխութիւն/-թյուն
 Geldwechsler *m* լումայափոխ
 Geldwert *m* դրամական արժէք/արժեք ~stabilität *f* դրամի արժէքի կայունութիւն
 Geldwesen *n* դրամական համակարգ
 Geldwirtschaft *f* դրամի անտեսութիւն/-թյուն
 Geldzählmaschine *f* թղթադրամ համրող գործիք
 Geldzahlung *f* դրամական վճարում
 Geldzuwendung *f* դրամական յատկացում/հատկացում
 gelect *ողորկ. սահուն* (լլուած/լլվլած). մաքրամաքուր
 Gelee *n* -s,-s դոնդող/ժելէ, բանդակ. եփած մրգահիւթ/-հյութ
 Gelege *n* -s թխահաւակիթ/թխածու
 gelegen *յարմար/հարմար. տեղին. դրուած*
 Gelegenheit *f* առիթ, պատահութիւն. դէպք ~sarbeit *f* պատահական աշխատանք ~er *m* անկանոն աշխատող ~erin *f* անկանոն աշխատող կին ~sdichter *m* զանազան առիթներով/-ների բանաստեղծ ~in *f* զանազան առիթներով բանաստեղծուհի ~sdiel *m* որոշ առիթներով/-երի գող ~in *f* որոշ առիթներով/-երի էգ գող ~sgedicht *n* յարմարառիթ ոտանաւոր/-վոր ~sjob *m* ոչ մնայուն աշխատանք ~skauf *m* յարմար գինով գնում ~sraucher *m* մերթ ընդ մերթ ծխող ~in *f* մերթ ընդ մերթ ծխող էգ ~sspieler *m* մերթ ընդ մերթ բախտախաղի մասնակցող ~in *f* մերթ ընդ մերթ բախտախաղի մասնակցող էգ ~stätter *m* առիթներով/-րի յանցագործ/հան- ~strinker *m* մերթ ընդ մերթ խմող ~in *f* մերթ ընդ մերթ խմող էգ ~sverkauf *m* յարմար գինով վաճառում ~sverkehr *m* ար վարձակառքերով/-րի գործարկ

gelegentlich պատահական, դիպուկածական.
երբեմն, մերթ ընդ մերթ, պարբերաբար
gelehrig ընդունակ. ուսումնաստենչ
Gelehrigkeit *f* ընդունակութիւն. ուսումնա-
տենչութիւն/-ություն
gelehrt *adj* ընդունակ. ուսումնաստենչ
Gelehrt *m/f* հմտութիւն/-ություն. գիտա-
պաշար. խոր ծանօթութիւն/ծանոթություն
gelehrt ուսեալ/ուսյալ. գիտուն. գիտնական
Gelehrte *m/f* գիտնական, ուսեալ/-յալ անձ.
հմուտ անձ. խորիմաց անձ
Gelehrtheit *f* հմտութիւն/-ություն. ուսում
Geleier *n-s* բզզիւն/բզզյուն. ճապաղ նուագ
Geleise *n-s*, -անուահետք. երկաթուղի. վիս
կենսուղի. առօրեայ/-օրյա
